

վողի հետ, և երկրորդ մետաքսագործների այդ տեսակ մտադրութիւնը, որը յիշեցնում է առաջադարձագործների վարմունքը, ոչ մի կերպով արգելադրանք չէ կարող Այս, տեղական արդիւնաբերութիւնները կարող են դարձագրման, տեղական հարստութիւնների մշակութիւնը դեռ ևս շատ հոգատարութիւն է պահանջում, բայց այդ հարստութիւնը և ազգայնականութեան շահերը մաքուր նշանակելու...

Ա. Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 22-ին իշխան կառավարչակոմ Գոնդուկով-Կորսակով ուղևորվեց դէպի Բաթում:

Վերջապէս... վերջապէս մենք կարողացանք ստիպել «Արձագանք» հրատարակիչ պ. Գովանանիսեանին շարժական մի քանի տող էլ է գրել «Մշակի» մտքերը և ասածները այնքան խիստ են խաթմել նրա կաշին, որ արթնացրել են ամբողջ 14 տարի գրականական թմբուկեան մէջ խորատուգլած պարոնին իր կտորած գրչով... Եւ մենք միայն այժմ ենք հասկանում, թէ ինչ էր անում այդքան երկար տարիների ընթացքում անունով «խմբագիր» համարվող պ. Գովանանիսեանը Նա սերտում և անդիւր է եղել անում «Մշակի» հին համարների ֆելիետոնները, լուրերը և յօդուածները, որովհետեւ, ինչպէս երևում է, «Մշակը» պ. Գովանանիսեանի համար նոյնն է եղել, ինչ որ մեր մղղղներին համար «ժամագիրք» է: Շարունակեցէ, որքան ոյժ ունէր, անդիւր անել «Մշակի» տողերը, և տպեցէ «Արձագանք» զատարակ էջերում թէ ինչ էր ասում սրանից 15 կամ 12 տարի առաջ «Մշակը» ոչ թէ միայն այս կամ այն գրելի, կամ հայ կնոջ մասին, այլ և թիֆլիսի փողոցների և եղանակի մասին, և ապա սկսեցէ այդ առիթով դառնացել և ձեր զառանգանքի մէջ երևակայեցէ, որ դուք ձեր ողորմելի գրով կարող էք «Մշակի» զխիսն կրիտիկ ու լինել: Ինչ արած, դոն-քիշոտութեան համար սահման չը կայ: Իսկ «Արձագանք» ըստ ժողովրդի «Արձագանքի» մէջ գտնէ «Մշակի» առիթով էլ է մի բան կը գտնեն կարգադու համար, և երգում են, որ մենք «Արձագանքին» այնքան շատ նիւթ կը տանք, որ նա ոչ թէ միայն իր էջերում տպվող բոլոր յօդուածները, այլ դուրսէ նոյն իսկ վեպերն էլ «Մշակի» առիթով կը գրի: Օհ, ուր և մի յառաջ...

Երևանից մեզ գրում են. «Մի քանի օր առաջ, այստեղացի մի հայ տղայ 3 բուրձու պատճառով ատրճառակով սպանեց մի արհեստաւորի, այն էլ Թաղաւորական կոչված մեծ փողոցում, ժամը 12-ին Մարգարայանի ձերբակալված է»:

Ի պատիւ դրամատուրգ Սունդուկեանի 25-ամեակի, Երևանի հայ երիտասարդութիւնը, ինչպէս մեզ գրում են Երևանից, մտադրել է զեկտեմբերի 22-ին մի ներկայացում տալ՝ խաղալով յօբելեարի պիէսաներից մէկը:

Օրէնքներից մեզ գրում են նոյեմբերի 14-ից հետեւալը: «Օրէնսդատ փոխտանիք ցուրտ ու տաք եղանակը կարծես մի սովորական բան է դարձել: Հոկտեմբերի սկզբում ցուրտ էր և ձիւն: Իսկ առաւելը դարձեց իրանց երթնակութիւնը, որովհետեւ ծովը սաստիկ ալէկոծված էր: Այդ ժամանակ առետուրը մեռելային վիճակի մէջ ընկաւ: Նոյեմբերի սկզբներին միայն եղանակը մեղմացաւ, իսկ այդ ամսի 13-ին նոյն իսկ գարնանային եղանակ արաւ»:

Երեւանից մեզ գրում են. «Ամսի 20-ին պէտք է հրաւիրի կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի ընդհանուր ժողովը, յայտնելու այդ ճիւղի վարչութեան անդամների հաստատելը, որով և այդ օրից տեղիս ճիւղը կը սկսի իր գործունէութիւնը: Գոյս ունենք, որ այս անգամ ընկերութիւնը նախորդի պէս կարճակեց չի լինի և աւելի տոկոսն ունենալով կը գործի: Զանկութիւն կայ առաջարկել տեղիս կանանց ևս մասնակցել այդ ընկերութեան և յոյս կայ, որ աշուղտիւն կը լինի, և եթէ կանայք ևս բարեհաճեն մասնակցել, այն ժամանակ հեշտութեամբ կարելի է թէ թատրոնական ներկայացումներ և թէ երեկոյթներ տալ այդ ընկերութեան օգտին»:

Մեր քաղաքի բժիշկներից ոմանք մեզ հաղորդում են, որ թիֆլիսի դանադան թաղերում ծաղիկ հիւանդութիւնը շատ տարածվել է: Տարաբաղաբար, ինչպէս երևում է, ժողովուրդը, մանաւանդ ռումիլի ամբողջը, համարեա թէ աւելորդ զիկ պատուաստելու համար քաղաքում դոյութիւն ունի արդէն առանձին կայաբան, և պատուաստելը ձրի է կատարվում չունորների համար: Չէ կարելի չը դարմանալ, որ քաղաքի ժողովուրդն էլ այդպիսի թերահաւատութեամբ է վերաբերվում դէպի ծաղիկ պատուաստումը, որը մի գործը միջոց է այդ սարախիւիկի հիւանդութեան առաջն առնելու և բարձրագիւր երեխաներին մահից ազատելու համար:

Այսօր, հինգշաբթի օր, նոյեմբերի 24-ին, ուսուցիչ դրամատիկական խումբը պէտք է ներկայացնի «Քին» պիէսան, խմբի առաջին դերասանն պ. Լիւպիլովի: Բեմադրիչն է: Գիւմայի այդ պիէսան անծանօթ է մեր հասարակութեան, որի զխաւար դերը մեր յայտնի դերասան պ. Աղամեանի ամենաաշուղ դերերից մէկն էր:

Երեւանից մեզ գրում են. «Իր ժամանակը վաղուց անցկացրած քաղաքապետի Գեղամեանի նորից ընտրվելու համար մեծ յոյս ունի թուրք ձայնաւորների վրա: Բայց չենք կարող չը նկատել, որ պարտնք միանգամայն սխալվում է իր հաշիւների մէջ: Թուրքերը իրանց կանդիդատ ունեն, ունի կադրելի, ազգով թուրք, որին և նորա առաջ կը մղեն, եթէ յոյս ունենան աշուղութիւն դառնելու»:

ՎԱՐՍԱՐՔԱՍՏԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 3-ին վարձանված այստեղացի Գեորգ Օհանջանեան, որը կենդանութեան ժամանակ երկար տալիս էր վարել է թէ դպրոցի հոգաբարձուի և թէ եկեղեցու երեցիփոխի պաշտօնը, մեռնելուց առաջ նուիրեց եկեղեցուն ու դպրոցին 100 բուրլի և 25 բուրլի էլ դպրոցի նոր շէնութեանը»:

Թիֆլիսի քաղաքային դումայի նոյեմբերի 21-ի նիստում, ի միջի այլոց, քննվեց Գորգանովի ջրանցքի հարցը: Ինչպէս յայտնի է, քաղաքային վարչութիւնը ուղղում է գնել և քաղաքին սեփականացնել այդ ջրանցքը: Երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան: Զայնաւորներից ոմանք դանադան միջոցներ առաջարկեցին այդ հարցը իրագործելու համար, իսկ ոմանք էլ այն միտքը յայտնեցին, որ քաղաքի համար ձեռնառու չէ այդ ջրանցքի գնելը: Զայնաւորների կողմից յարուցած առաջարկութիւններից ոչ մէկն էլ չընդունվեց: մեծամասնութեան կողմից և այդպէս Գորգանովի ջրանցքի գնելու հարցը մնաց անվճիւր:

Թիֆլիսում նոր կազմակերպված «Արտիստական ընկերութիւնը», բանակցութիւններ սկսեցին ներկայումս Աթէնքում ներկայացումներ տուող ֆրանսիական մի օպերետային խմբի հետ, համաձայն այդ խմբի առաջարկութեան, վճարել է քաղաքային թատրոնը մեծ պատի ընթացքում այդ խմբին տալ՝ օպերետներ տալու համար: Այդ ներկայացումները կը շարունակվին մինչև ամառ:

Մի քանի օր է արդէն, որ թիֆլիս են հաւաքվել թիֆլիսի դաւառի զանազան կողմերից այն երիտասարդները, որոնք պէտք է ենթարկվին դի-նորաբարձի Գաւառական զինուորագրական ատենանք արդէն սկսել է իր գործողութիւնները, նոյեմբերի 22-ից, զինուորական մուգեմի նոր շինութեան մէջ: Զինուորագրի ենթարկվող նոր երիտասարդները խմբով են անցնում են մուգեմի մի աստիճանից և պարելով ժողովրդական պարեր, և դոցա այդ ուրախութիւններին ակա-նատես լինելու համար շատ անգամ հաւաքվում է մեծ բազմութիւն: Զինուորագրի ենթարկվող ներքի թիւը 200-ի է հասնում:

Վաղը, նոյեմբերի 25-ին, բանիկ թատրոնում, ի նպատակ դրաց դերասանական խմբի տաղանդաւոր դերասան Արաշիճէի կը ներկայացվի «Ժամանակակից հերոսներ» նոր պիէսան, հեղ. Ա. Երէթէլի: Պ. Երէթէլիի նոր պիէսայի մէջ, ասում են, դուրս են բերված խոսքերի նման ժամանակակից հերոսների տպերը: Պիէսայի ներդրութիւնը և Արաշիճէի նման տաղանդաւոր դե-

րասանի բեմադրիչ երեւի մեծ բազմութիւն կը դրան Դէպի թատրոնը:

Երէկ, նոյեմբերի 23-ին, գինադիւանքում և կառավարչական բոլոր դպրոցներում մաղթանքներ կատարվեցան ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Գելիանովի յիշատակը յօրհանելու առիթով: Այդ օրը բոլոր կառավարչական դպրոցներում ուսում չը կար:

Բազմաթիւ պ. Գաբէթ Մկրտչեան Տէր-Գաբրեան հանդիսանալով լինելով մի քանի անձինքներից 30 բուրլի յօդուած Զէյթունի հրկիզակներին, այս օրին հասցրել է այդ փողը մեր խմբագրութեանը ինչպէս, որ եթէ Զէյթունի հրկիզակներին համար եղած հանդիսանակութիւնը այլ ևս չէ շարունակվում, յատկացնել յիշեալ գումարը Բաբէթի հեղինակութիւնների հրատարակման գործին: Նոյն պ. Տէր-Գաբրեան տուել է մեզ անձնապէս իր կողմից նուիրած 30 բուրլի ևս, որպէս զի այդ փողը յատկացնեք Բաբէթի հեղինակութիւնների հրատարակման գործին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ մեզ գրում են, որ մայրաքաղաքի հայ ուսանողները դիտաւորութիւն ունեն տօնիկ Սունդուկեանի յօրհանելու: Նոյն դիտաւորութիւնն ունեն և վրացի ուսանողները:

Մեզ մի քանի անգամ դիմել են նամակներով թէ այս կամ այն հայոց հրատարակութիւն անձիւր են ստանում, կամ բաժանորդագիրը տուած լինելով՝ հրատարակութիւնը ամենին չեն ստանում: Նորերումս այս տեսակ նամակ ստացանք և Աստիւսանից: Այդ տեսակ դանդաղներ մենք չենք կարող տպել «Մշակի» մէջ, որովհետեւ այդ տեսակ նամակներով չենք կարող լինել մեր լրագրի էջերը: Թող բաժանորդները դիմեն ուղիւ այն խմբագրութիւններին, որոնցից պահանջելու են և օրինական ճանապարհով ստիպեն նրանց տպագրել իրանց նամակները: Նոյն իսկ այն հրատարակութեան մէջ, որից դժգոհ են և որին իրանց դանդաղները անդադար ուղղելով, ոչինչ բաւականութիւն չեն ստանում:

Երէկ, նոյեմբերի 23-ին, Պետերբուրգում պէտք է տօնվել ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Գելիանովի յիշատակը, համեստ կերպով: Այդ օրը ինքն Գելիանով Պետերբուրգում չը պէտք է լինէր: Նրա պաշտօնակիցները վճարել են ներկայացնել նրան ալում և ուղերձ:

Ներկայումս պետական կառուծների միջնորդութեան մէջ ընկնում է կովկասում ձիւթ ենի բուսեցնելու և աճեցնելու հարցը: Գործը պէտք է տեղի ունենայ Թիֆլիսի մօտերում, և եթէ աշուղի, այն ժամանակ միջնորդութիւնը մտադրութիւն ունի աճեցնել ձիւթենու ամբողջ պլանաւորմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԽՈՐԷՆ ՊՍՏԻՍՐԻՔԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ անգամ հաղորդեցինք Կ. Պոլսի նորընտիր խորհրդի Պատրիարքի Սուլթանի ներկայացումը: Այժմ աւելորդ չենք համարում ծանօթացնել այն այցելութիւնների և ցոյցերի հետ, որոնք տեղի ունեցան նոյն օրը՝ քաղաքի Կ. Պոլսի լրագրիչներից զրանց վերաբերեալ տեղեկութիւնները:

Նոյեմբերի 8-ին Նըլլադի մեծ պալատին Պէշկիթաշ և անտի Դաւաթիա խումբ բազմութիւն կեցած էր Պատրիարք հօր անցքը դիտելու համար: Դաւաթիայ խորհրդարանին մէջ, ըստ կանխորոշ կարգադրութեան, ժամ 8-ին հաւաքուած էին այն եկեղեցական շարք և աշխարհական Տիարք օրը Պատրիարք Հօր պիտի ուղեկցէին ի Բ. Գուռն: Երբ ժամ 10-ին ծանուցուեցաւ ս. Պատրիարք Հօր վերադարձն ի Նըլլադէ, Կենտրոնական Վարժարանի աշակերտը, իրենց դաստիարակաց առաջնորդութեամբ, իջան եկեղեցւոյ առջին ճամբան և շարուեցան անդ: Թէ ճանքան և թէ եկեղեցւոյ շրջակայ փողոցները զրթնէ անանցանելի դարձած էին խռնակ բազմութիւններ: Երբ Պատրիարք Հայրն և իւր ուղեկիցը հասան Դաւաթիայ եկեղեցւոյն առջև, Կենտրոնական Վարժարանի սանուք սկսան այդտեղ երգել. եկեղեցւոյն զանգակները կը հնչէին և ժողովուրդը բուռն և երկար ծափահարութեամբ

օղը կը թնդացունէր: Ս. Պատրիարք Հայրը կառքին մէջէն օրհնեց և բարեկց դամենսին: Այսպէս, թափօրն աւելի ստուարանալով, ուղղուեցաւ ի Բ. Գուռն:

Բ. Գուռն շրջափակին մէջ երկու կարգի վրայ բարեկ կեցած էին զինուորք և եպարքոսական պաշտօնատան դավաններ. իսկ արտաքին կողմը գրաւեալ էր հոծ բազմութեամբ մը: Պատրիարք Հայրն և իւր եկեղեցական ու աշխարհական ուղեկիցաց մէկ մասը Մեծ-Եպարքոս Բարձր. Գեա-միլ փաշային ներկայացան որ ընդունեց դանուք արժանավայել պատուով: Ն. Բարձրութիւն խորհրդի Պատրիարքի պաշտօնը շնորհաւորեց համակրայից բանիւր, և Ն. Սրբազնութիւնը՝ շնորհակալութեան արտայայտութեամբ՝ յայտնեց թէ իւր յոյսը դրած է Վեհ. Սուլթանի բարձր հովանոյն և Մեծ Եպարքոսին աջակցութեան վրայ: Գետոյ, Պատրիարքն այցելութիւն տուաւ Պետական խորհրդոյ նախագահ Բարձր. Արիֆի փաշային, արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշային և խորհրդական Վսեմ. Զարութիւն փաշային և ամենայն մեծարանք ընդունուեցաւ:

Այս պաշտօնական այցելութիւններէ յետոյ, Պատրիարք Հայրն իւր ուղեկցաց հետ ելաւ Բ. Գուռնէն և հանդիսի ուղղուեցաւ ի Գուռ-Գարու. Սուլթան Վահան Գ. ի դամբարանին մօտ՝ թափօրը կանգ առաւ և անդ, Ս. Պատրիարք Հայրը կառքին մէջ յոտին կանգնելով աղօթեց ըստ սովորութեան Գետոյ, թափօրն իւր ճամբան շարունակեց: Այդ տեղէն սկսեալ մինչև ի Պատրիարքարան, փողոցները զրթնէ անանցանելի դարձած էին բազմութիւնէն. պատուհանները և պատշգամները ծածկուած էին գորգերով և շալերով, դրօշակներով և ծաղիկ, որոց մէջտեղ Սուլթանին և Պատրիարք Հօր՝ ձօնեալ վերտաւորութիւնը կերակէին զոյնզոյն ծաղաւեններով վրայ:

Գուռն եկեղեցւոյն առջև, յոյն քահանայք զգեստաւորեալ և դպրոցական տղայք զափնին ի ձեռին երգերով ողջունեցին Հայոց Պատրիարքին: Վարժարանին ուսուցչաց մին յոռնաբէն ուղերձ մը կարդաց: Ն. Սրբազնութիւն շնորհակալութիւն յայտնեց: Պատրիարքարանի փողոցին մօտ բազմութիւն հետզհետէ կը ստուարանար և աննկարագրելի ոգևորութիւն կը տրեր: Մայր եկեղեցւոյ ինչպէս նաև շրջակայ հայ և յոյն եկեղեցեաց զանգակներն համահունկ կը հնչէին այս պահուս. այդտեղ հայ երիտասարդները կազմեալ նուագա-ծուաց խումբ մը Համիտիէ քայլերգն սկսաւ նուագել և ժողովուրդն եռանդաւով ծափահարեց Վեց-ցէ Սուլթան և Վեցցէ խորհրդի Պատրիարքը՝ գոչելով: Մայր Վարժարանի դուռն ևս դարձաւ լի ծափահարանի հանդէպ տան մը պատշգամի վրայ կեցած էին սպիտակազգեստ երեք փողերիկ աղջկուք որք ծաղիկներ կը սփռէին թափօրին անցած պահուն: Փոխանորդ Հայրն, Փիլիպոս եպիսկոպոս և վարդապետաց ու քահանայից դասն հանդիսի առաջնորդեցին թափօրն մինչև Մայր Եկեղեցւոյ դուռն, ուր բարեկ կեցած էին ժամտարմայք և ոտիկանք: Անդ, Պատրիարք Հայրն և իւր եկեղեցական և աշխարհական բոլոր ուղեկիցք կառքերէն վար իջնելով, մտան ի Մայր Եկեղեցի:

Պատրիարք Հայրը սեղանին վրայ ելնելով բարեմաղթութիւններ ըրաւ: Տոմարէն դուռն ելնելու Ն. Սրբազնութիւն կանգ առնելով երջանկա-յիշատակ Ներսէս Պատրիարքի չիբմին առջև, յայտնապէս խոսեալ ձայնիւ, հոգեհանգստեան աղօթք մը արտասանեց անդ: Ն. Սրբազնութիւն երբ Մայր Եկեղեցւոյ դուռն ելնելով մտաւ ի Պատրիարքարան, ժողովուրդը կրկին ծափահարեց, որտեղին Վեցցէ-ներով և Պատրիարքարանի բակին մէջ ոչնչար մը զնուեցաւ: Օրը տարա-ժամած էր արդէն երբ Պատրիարք հայրը Պատրիարքարանի մեծ դահլիճն ելաւ, ուր եկեղեցական և աշխարհական բոլոր երեկելիք գնացան Ն. Սրբազնութեան համար: Երեկելիք գնացան Ն. Սրբազնութեան համար: Մի անգամ ևս մատուցանելով մեկնեցան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզից հեռագրում են, որ իբրեւ թէ մի-նիստը-նախագահ Ֆիլիք վճարել է լուծել հայրե-նասէրների միութիւնը:

Տրիեստում արգելվեցաւ Վերնանի օպերայի ներկայացումը:
Հռոմից հեռագրում են, որ «Moniteur de

Rome» լրագրի մէջ ընկած է մի հարց, որը վերաբերում է պապի Հռոմից վերջնականապէս հեռանալուն:

—Սօֆիայից հեռագրում են, որ բոլորական կառավարութիւնը վեց միլիոնի փոխառութիւն արաւ ամերիկական մի ընկերութիւնից:

—Հետեւելու լուրն են հեռագրում Սօֆիայից վիլհելմին: «Այստեղ լուր կայ, որ բոլորական է միջրանտները, բայց ցանկութիւն, վճար են խնդրել տալ բոլորական կառավարութեանը՝ իրանց ազատութիւնը չնորհելու մասին»:

—Փարիզում լուրեր են պտտում, որ գերմանական վիլհելմի կայսրը դեռ շատ տեղեր պէտք է ճանապարհորդի և ի միջի պլոց, կայսրը իբրև թէ պէտք է գնայ Սպանիա:

—Փարիզում շուտով լոյս պէտք է տեսնի մի նոր և շատ մեծ գիրք «Bismark dévoilé» վերնագրով: Այդ գրքի մէջ բազմաթիւ փաստերով պէտք է ապացուցվի իշխան Բիսմարկի երկրորդ քաղաքականութիւնը, որը իրագործելու համար նա դիմում է նոյնպիսի երկրորդ միջոցներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԷԼԳԻԱ, 21 նոյեմբեր: Միւս թագաւորը ինքը մտքեց նոր սահմանադրութեան մէջ այն բանը, որ երկրորդ անգամ չամուսնանալը պարտաւորեցուցի է:

ՇՍՏԷ, 21 նոյեմբեր: Հանրապետական կոնգրեսը մտադիր է յայտարարել պետութիւններին՝ Բելգիայի բանակների աղքատ վիճակի մասին, որպէս զի յեղափոխութեան առաջն առնի:

ՓԱՐԻԶ, 21 նոյեմբեր: Նէվիլում տեղի ունեցած միտինգում հակա-բուլանժականները յայտնեցին Բուլանժէին, որ նա դաւաճան է և բռնապետի հետեւ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 նոյեմբեր: Երէկ Սեւաստոպոլում վախճանվեց ծովային մինիստրութեան կառավարիչ Շեստակով:

ԼՈՆԴՈՆ, 22 նոյեմբեր: Անգլիական բանկը ինչեքնց գլխավոր 5-ից մինչև 3 1/8 0/0:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ

Նոյեմբերի 22-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	98	40
Համբուրգի վրա 100 մարկ	48	50
Փարիզի վրա 100 ֆրանկ	38	75
Ռուսի	7	87
Մարսայի կուպոններ	157	50
Արծաթ	1	18
Բորսայի դիվիդենդներ	63/4	73/4 0/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	98	25
— — — — — 2-րդ —	97	87
— — — — — 3-րդ —	97	50
— — — — — 4-րդ —	97	87
— — — — — 5-րդ —	97	50
— — — — — 6-րդ —	—	—
Նոր 40/0 փոխառութիւն.	81	50
Արեւելեան 50/0 փոխառութիւն. 1-ին շրջ.	97	25
— — — — — 2-րդ —	97	25
— — — — — 3-րդ —	97	—
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն.	270	—
— — — — — երկրորդ —	241	25
51/2 0/0 բնաւ.	102	12
Ոսկեայ բնաւ.	180	—
Եւրոպայի կոնսոլիդաց. փոխառութիւն.	152	25
Նոր երկաթուղային բնաւ.	97	50
50/0 գրաւական թղթեր կալուած.	—	—
փոխ. կրեդ. ընկ. մետ.	—	—
— — — — — թղթայ.	91	37
Գրաւ. թղ. Ալքու. բանկի.	97	62
51/2 0/0 գրաւական թղթեր խորհրդի կալուած բանկի.	97	50
60/0 գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	99	75
— — — — — Պոլտավայի —	100	50
— — — — — Պետ. Զուպկ. —	99	75
— — — — — Վիենն. —	101	—
— — — — — Մոսկովայի —	101	—
— — — — — Բեսարաբ. Զալի. —	100	12
— — — — — Նիսի. Սամար. —	100	—
— — — — — Վիեննայի —	99	12
— — — — — Թիֆլիսի — 72 և — տ.	—	—
— — — — — Վոլոժայի — 18 և — տ.	—	—
Վոլոժայի-Կամենի բանկի ակցիաները	666	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 237	—	—
Րիբինսկ-Բոլոգոյի ընկ.	83	50
Ս. Պետերբուրգի քաղաքային օրկւ-դպրանի.	92	50
Մոսկովայի քաղաք. օրկւդպրանի.	92	50
Օդէսայի —	92	75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրկ.	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը վերջումը ամուր է:	—	—

Խաղաղութ. հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄՈՐՆԵՐ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ն Ն Ե Ր

САРПИНКА. | Приемъ заказовъ и пересылка по всей Россіи и за-границу. | СЕЗОНЪ 1889 Г.

собственной выработки САРПИНСКАЯ ИЗДѢЛИЯ ручнаго ткачества родъ зефира, для лѣта на дамскія платья, дѣтскіе костюмы и мужскія сорочки. Отлично моются. Цѣны отъ 15 до 22 копѣекъ за аршинъ.

ОГРОМНАЯ КОЛЛЕКЦІЯ НОВѢЙШИХЪ ОБРАЗЦОВЪ

высылаются заказной бандеролью въ альбомѣ за 42 и въ конвертѣ за 28 копѣекъ почтовыми марками. Цѣны и условія при образахъ.

Адресъ: Саратовъ. „Говоришество промышленниковъ саринскихъ издѣлій.“

СЕЗОНЪ 1889 Г. | ПРОДАЖА ШТУКАМИ и АРШИНАМИ. | САРПИНКА.

1—5 (10 և 25)

ՕԴԵՍՍԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ОДЕССКИЙ МАГАЗИНЪ

Եղբ. Ա. և Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՏՆԵՐԻ, Միքայելեան կամուրջի վրա, նախկին Միրզոյեվի տա- նը № 58 և 59

ԴԵՊՈ

Մարդկանց և երեխաների պատրաստի հագուստների:

Ստացել ենք մոտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քանակութեամբ աշխատային և ձմերային պատրաստի հագուստներ ամենավերջին ձևի: Գնորդ ամենամատչելի և ձեռնառու են:

3—3

Եղբ. Ա. և Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՏՆԵՐԻ

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ

ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ

КОРОВА 30 и 80 К.

ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ

БОЛЬШОЕ ФЛАКОНЪ 80 К.

ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ

КОРОВА 30 К.

СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՈԿԻԶՈՐ Ա. ՇՏԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄՆԵՐԻ 18 ՍՈՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՈԴՈԼԵԱՆ ԱՍԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ ԿՈԿԱՅԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿ- ՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆԵՍ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան ղեկավարաւորաւոր, և պ. պ. Շահարանեանցի, Մակեդոն, Սենիկովիկով և Ալեքսանդրովի ղեկավարութեամբ. ԲԱՌՈՒԻ մէջ, Բէկկերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կոկոչիկի մօտ, ԱՍԱՂՐՈՊՈԼՈՒՄ Բրոննոցիկով մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱՐՈՒՄ:

(Հ.)

Շաբաթ նոյեմբերի 26-ին, կատարվելու է հոգեհանգիստ Մոդնու սբ. Գէորգ եկեղեցու աւագ քահանայ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՋԱՆԱՃԵԱՆՑԻ յիշատակին: Խնդրում ենք ծանօթներին և ազգականներին շնորհ բերել առաւօտեան ժամը 10-ին, պատարագին, Մոդնու եկեղեցին: 1—1

ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ-ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ

Արդէն սկսած են Բնութեան փոփոխութիւնները շարունակվում են: Ծրագրի մասին դիմել հիմնադրին: Զիջանելով շատերի խնդրներին, ազատ լսողների համար մուտքը նշանակված է 1 ր.: Իսկ կուր- սային լսողների համար տարեկանը մնում է 75 ր.: Գատախոսութիւնները լինելու են ամեն երկու- շաբթի չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամ 6—7 երեկոյան:

Հիմնադիր կուրսերի Ա. ԱՐԱՍԻՆԵԱՆՑ
Тифлисъ, Гановская ул., д. Иоаннисани.

4—10

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕНОЕ Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ РАУДРАУНОВЪ ЗАСУСАДЪ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան

հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագում է կենսերի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ժԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում:
- Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիները և մահաբանան տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԹԵԱՆ Կողմից, որը շտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԵՆԵԲԵՐԳ:

ՊԱՆԱՇԱԿՈՒՄ ԵՆ ԱԳԵՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար:

27—32 (Հ)

Н Ы М Е Д И К А Я Г О С Т И Н Н И Ц А

ВЪ ВАРШАВѢ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դուրապա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նորն իսկ ԱՌՆԵՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՏԵՂԵՐԻ կողքին: 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 ռուբլի օ-րական վարձով:

ԿՈՆԴԻՏԵՐԻԱ և ԲԷՍՏՈՐԱՆ

ձառեր 30 կոպէկից մինչև 1 ռուբլի:

ՕՍԵՐԻՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:
ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով:

(Հ)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Թ. ՆԱԶԱՐԱՆՑԻ ԿԱԶՄԱՄ

1889 ԹԻԱԿԱՆԻ ՕՐԱՑՈՑՑԸ

Բաղկացած է մօտ 400 երեսից և պարունակում է իր մէջ շատ հարուստ ու բազմա- կողմանի տեղեկութիւններ, որոնք կարող են հետաքրքրել ու պիտանի լինել ամեն դաս- կարգի մարդկանց և ամեն ժամանակի խիթերի մեծ հասը բոլորովին նոր են:
Գինն է 20 կոպ., 10-ով և աւելի աւանդին՝ հասը 15 կոպ.: Մտնվում է Թիֆլիսի բոլոր գրախանութանոցներում: Կազմողին դիմողները ճանապարհածախի պատճառով պի- տի նկատի ունենան հետեւեալները:
Թիֆլիսից դուրս 4 օրինակից պակաս չէ ուղարկվում, և աւանդում է 1 ռուբլի.—10-ով աւանդը կամ ամեն 10-ից կը ստանայ 9 հատ, կամ ամեն 10-ի համար կուղարկի նաև 15 կոպէկի մարկաւ.—100-ով աւանդը կամ կը ստանայ 95 հատ, կամ կուղարկի նաև 100-ի համար 1 ռուբլի.—200-ով և աւելի աւանդը ճանապարհածախս չէ վճարում և բոլոր 100- ները ստանում է լրիւ:—100-ով և աւելի աւանդը ամեն մի 100 օրացուցի հետ կը ստա- նայ կազմողից նաև մի օրինակ III հատոր «ԱՆԵԿԴՈՏՆԵՐ», որի գինն է 50 կոպ.:
Հասցէն. «Тифлисъ, на Авлабарѣ, учителю Ованесу Назарянцъ».

3—5 (Հ)

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1889 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

ПОДЪ РЕДАКЦІЮ А. Х. САВИНИНА.

ГОДЪ III

«Медицинская Бесѣда» имѣетъ цѣлю знакомить общество, черезъ посредство общедоступ- ныхъ статей, съ современными направлениемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигиенѣ, статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигиена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебныя замѣтки и хроника, библиографи- ческій отдѣлъ, историческія свѣдѣнія и замѣтки—вотъ основная часть программы журнала. «Медицинская Бесѣда», имѣя обширную, разностороннюю программу, будетъ служить, какъ и въ прошлыхъ годахъ, въ одинаковой степени интересамъ врачей и публики.
«Медицинская Бесѣда» выходитъ два раза въ мѣсяцъ, каждый рызь въ объемѣ до 2-хъ печатныхъ листовъ.

Цѣна за годъ безъ доставки 3 р. 50 коп., съ доставкой 4 руб.; за полгода безъ доставки —2 руб., съ доставкой 2 р. 50 к.; съ пересылкой за годъ—4 р. 50 к., за полгода—3 руб. Фельдшера, фельдшерницы, акушерки и сельскіе учителя платятъ 3 руб. въ годъ съ доставкой и пересылкой.

Подписка принимается: въ Воронежѣ, въ конторѣ журнала (1-я Остроожская, д. Мюфке) и въ книжномъ магазинѣ В. В. Юркевича (Больш. Двор. ул., домъ Адлеръ), въ С.-Петер- бургѣ: въ книжномъ магазинѣ К. Л. Риккера (Невскій, № 14), въ Медико-Хирургическомъ магазинѣ Н. П. Петрова (Выборгская сторона, Нижегород., № 17); въ Москвѣ: въ книжномъ магазинѣ А. А. Карцева (Фуркасовскій переул., д. Обидиной) и въ конторѣ Н. Печковской (Петровскія линіи); въ Орлѣ, въ публичной библиотекѣ «Орловскаго Вѣстника»; въ Самарѣ, въ конторѣ редакціи «Самарской газеты»; въ Астрахани, въ Прибалтійскомъ магазинѣ, г. Росля- кова, въ Оренбургѣ, у г. завѣдующаго библиотекой при Казенной Палатѣ.

3—6